ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ՄՇԴ-196-2024 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «15» «05» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Մարինա Հակոբյանի, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով ժամանակակից արվեստի վարչության 2024 թվականի մայիսի 3-ի N Ն/13/9918-2024 զեկուցագիրը և համաձայն 2024 թվականի ապրիլի 19-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» դրամաշնորհի հատկացման N ՄՇԴ-196-2024 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 9.1-ին կետի՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. Պայմանագրի 4.2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2024 թվականի ապրիլի 16-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը»:

1.2. Պայմանագրի Հավելված N 1-ում «2024 թ. ապրիլի 20-ից մայիսի 20» բառերը փոխարինել «2024 թ. ապրիլի 16-ից մայիսի 20» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ՀՀ, ք. Երևան, Արամի 1
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h 900018001421, ՀՎՀՀ 02506317
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732	հեռ.(010) 580-812
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
Հ. Հակոբյան	Մ. Հակոբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.